ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

15 հուլիսի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Գայանե Ալլահվերդյանը, Անահիտ Բադալյանը, Արթուր Դավթյանը, Անդրանիկ Թամազյանը, Արկադի Թամազյանը, Տելեմակ Աղվանյանը, Սենիկ Չերչինյանը, Արամ Ռամազյանը, Մանվել Ռամազյանը, Թագուհի Վարոսյանը, Աբել Տիտանյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝ Արթուր Շախկուլյան , Գոռ Հովվյան, Ստեփան Ասրյան , Շողիկ Քառյան, Սամվել Թորոսյան, Կարինե Սիմոնյան, Արթուր Հովհաննիսյան , Արթուր Մանուկյան , լրագրողներ, Ալավերդի համայնքի վարչական տարածքների ղեկավարներ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղումաշյանը

Նիստը արձանագրում էր ՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հեղինե Ճիճիյանը

Նախքան օրակարգային հարցերին անդրադառնալը, համայնքի ղեկավարի կողմից առաջարկվեց օրակարգում ավելացնել 1 հարց, որին համայնքի ավագանին կողմ քվեարկեց (16 կողմ):

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 65-րդ հոդվածի՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 15-ի թիվ 8 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի հուլիսի 15 -ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
1.2 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2024 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին
1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին
1.4 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ծաղկաշատ գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային քարտեզի 06-050-0134-0023 ծածկագրով 0.02982 հա մակերեսով հողամասի նպատակային եվ գործառնական նշանակությունները փոփոխելու մասին
1.5 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-060-0208-0076 ծածկագրով 0.07835 հա մակերեսով հողամասից առանձնացվող 0.04057 հա մակերեսով հողամասի նպատակային եվ գործառնական նշանակությունները փոփոխելու մասին
1.6 Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը օրենսդրության պահանջներին համապատասխան ուղղակի վաճառքով օտարելու մասին
1.7 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող մի քանի հողամասեր օտարելու մասին
1.8 Ալավերդի քաղաքի Բաղրամյան (նախկին՝ Շահումյան) թաղամասում գտնվող, 06-002-0003-0004 ծածկագրից առանձնացվող, 0.00745 հա մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի կարգով Վերիչկա Վանիչկայի Սիմոնյանին օտարելու մասին
1.9 Օրինական ճանաչված կառույցները և համապատասխան հողամասերը՝ տվյալ կառույցներն իրականացրած անձանց գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին
1.10 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ճոճկան գյուղ, 1 հասցեում գտնվող, կադաստրային քարտեզի 06-069-0349-0002 ծածկագրով հողամասի նպատակային եվ գործառնական նշանակությունները փոփոխելու մասին
1.11 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի կայուն էներգետիկ եվ կլիմայական գործողությունների ծրագիրը հաստատելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ի գիտություն ընդունել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83- Ն/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի հողային հաշվեկշիռը 2024 թվականի հուլիսի 01-ի դրությամբ՝ համաձայն N 22 և N 22ա ձևերի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-050-0134-0023 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.02982 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառարավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառարավարության 17.06.2021թ. N 987-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 3) ենթակետով, հիմք ընդունելով «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված դիմումը, սեփականության իրավունքի 26122019-06-0067 վկայականը, «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 27.06.2024թ. թիվ 31 դրական եզրակացությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ծաղկաշատ գյուղի վարչական սահմաններում գտնվող, «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականություն հանդիսացող, 06-050-0134-0023 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.02982 հա մակերեսով վարելահողը փոփոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, կապի հողեր գործառնական նշանակության՝ բջջային կապի ալեհավաք աշտարակի տեղակայման ու սպասարկման համար:
2. ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պարտավորեցնել վճարել սեփականության իրավունքով իրեն պատկանող, 0.02982 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂՊԱՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-060-0208-0076 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.07835 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ 0.04057 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառարավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով սեփականության իրավունքի 18052023-06-0064 վկայականը, «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 30.04.2024թ. թիվ 26 դրական եզրակացությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Անահիտ Արտեմի Բեժանյանին սեփականության իրավունքով պատկանող, 06-060-0208-0076 ծածկագրով, 0.07835 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից առանձնացվող՝ 0.04057 հա մակերեսով հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Անահիտ Արտեմի Բեժանյանին պարտավորեցնել վճարել սեփականության իրավունքով իրեն պատկանող, 0.04057 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին՝

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2) ենթակետով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետով, 3-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, հաշվի առնելով, որ փաստացի ավել օգտագործվող հողամասը համայնքի գլխավոր հատակագծով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հիմք ընդունելով Սուրեն Սիմոնի Պետրոսյանի դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, մատակարար կազմակերպությունների համաձայնությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.***

1. Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0023-0117 ծածկագրում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.06 հա մակերեսով օրինական հողամասին կից ավել օգտագործվող 300քմ հողամասից Սուրեն Սիմոնի Պետրոսյանի կողմից փաստացի ավել զբաղեցված 0.0125 հա մակերեսով հողամասն օտարել փաստացի

օգտագործողին՝ հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի չափով:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-0 Դեմ-0 Ձեռնպահ-16

Որոշումն ընդունված է. /կցվում է 87-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղականինքնակառավարմանմասին» ՀայաստանիՀանրապետության օրենքի 18-րդհոդվածի 21-րդկետիդրույթներով, Հողային օրենսգքրի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 20062024-06-0011, N 28062024-06-0041, N 02072024-06-0048, N 02072024-06-0051, N 02072024-06-0045 վկայականները, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, Հաղպատ գյուղ, 18-րդ փողոց, 7 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-060-0036-0014 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0.10016 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն: Աճուրդի մեկնարկային գին սահմանել 1 028 000 (մեկ միլիոն քսանութ հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, Գ. Օսիպյան փողոց, 15/5 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0152-0115 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00302 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն: Աճուրդի մեկնարկային գին սահմանել 110 000 (մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

3. Համայնքային սեփականություն հանդիսացող, Արդվի գյուղ, 12-րդ փողոց, 5 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-017-0121-0014 ծածկագրով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության, 0.48237 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն: Աճուրդի մեկնարկային գին սահմանել 2 920 000 (երկու միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:
4. Համայնքային սեփականություն հանդիսացող, Արդվի գյուղ, 12-րդ փողոց, 9 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-017-0121-0015 ծածկագրով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության, 0.48142 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն: Աճուրդի մեկնարկային գին սահմանել 2 915 000 (երկու միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող, Արդվի գյուղ, 3-րդ փողոց, 1/1 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-017-0014-0016 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 0.01042 հեկտար մակերեսով հողամասը, հասարակական օբյեկտ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն: Աճուրդի մեկնարկային գին սահմանել 90 000 (իննսուն հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:
6. Հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտայինօբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեքներ կայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
7. Հողամասերի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:
8. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասերի աճուրդը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-15 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ա/

Լսեցին՝
ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ (ՆԱԽԿԻՆ՝ ՇԱՀՈՒՄՅԱՆ) ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-002-0003-0004 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ, 0.00745 ՀԱ

ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՎԵՐԻՉԿԱ ՎԱՆԻՉԿԱՅԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2) կետով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4) ենթակետով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Վերիչկա Վանիչկայի Սիմոնյանի դիմումը, 08.09.1998թ. տրված դատարանի որոշումը, «ՏՍ-Ռիելթի» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, հաշվի առնելով, որ Վերիչկա Վանիչկայի Սիմոնյանն ընդունել է խանութ-տաղավարի սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ալավերդի քաղաքի Բաղրամյան (նախկին՝ Շահումյան) թաղամասում գտնվող, 06-002-0003-0004 ծածկագրից առանձնացվող, 0.00745 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, 59004 (հիսունինը հազար չորս) ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով, օտարել հողամասում առկա խանութ-տաղավարի նկատմամբ, դատարանի 08.09.1998թ. տրված որոշմամբ, սեփականատեր ճանաչված Վերիչկա Վանիչկայի Սիմոնյանին:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ա/

Լսեցին՝

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ՝

ՏՎՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջներով,Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 19.04.2024թ. N 723-Ա, 06.03.2024թ. N 460-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 24062024-06-0041 (գաղտնաբառ՝ NEKP9TAFETRU), N 21062024-06-0094 (գաղտնաբառ՝ IBCH4XGIMRJS), վկայականները, հաշվի առնելով, որ կառույցներն իրականացրած անձանց կողմից ընդունվել են ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝ Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ախթալա քաղաք, Աբովյան փողոց, 13 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 19.04.2024թ. N 723-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 81.7 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունները՝ ծածկը ու պարիսպը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.04 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-003-0017-0147/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Գագիկ Սարիմանի Մամաջանյանին:
2. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Ս. Թեհլիրյան փողոց, 33/2 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 06.03.2024թ. N 460-Ա որոշումով Հայաստանի Հանրապետության սեփականություն ճանաչված և օրինականացված, 241.2 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.02228 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0050-0250/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Լևոն Գուրգենի Պարանյանին:
3. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կառույցներն իրականացրած անձանց հետ կնքելու կառույցի և զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրեր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՃՈՃԿԱՆ ԳՅՈՒՂ, 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-069-0349-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառարավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից տրված 12.06.2023թ. N 03/11.12/4450-2023 և 02.02.2024թ. N 03/11.12/584-2024 գրությունը, սեփականության իրավունքի 26042023-06-0080 վկայականը, «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 27.06.2024թ. թիվ 30 դրական եզրակացությունը՝ ***համայնքի ավագանի՝ որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ճոճկան գյուղ, 1 հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, 06-069-0349-0002 ծածկագրով, հատուկ նշանակության 4.0 հա մակերեսով հողամասը փոփոխել հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը հանգստի համար նախատեսված հողերի՝ հետագայում օտարման նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից.

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ա/

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալավերդի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

Ավագանու անդամներ՝

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ

ՍԻՄՈՆ ԶԱԽԱՐՈՎ

ՖԼՈՐԱ ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ

ՀՐԱՆՏ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՂՈՒԼՅԱՆ

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊԱՊՈՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱՄԱՋՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲԱԴԱԼՅԱՆ

ԹԱԳՈՒՀԻ ՎԱՐՈՍՅԱՆ

ԱԲԵԼ ՏԻՏԱՆՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՌԱՄԱԶՅԱՆ

ՍԵՆԻԿ ՉԵՐՉԻՆՅԱՆ

ՏԵԼԵՄԱԿ ԱՂՎԱՆՅԱՆ

ԱՐԱՄ ՌԱՄԱԶՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆԸ

_____